


# Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH



400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-277-6400

VERY REV. SHNORK KASPARIAN

12 Յունիս, 1987.

Բարձրաշնորհ  
Տ.Թորգոմ Ս.Արք.Մանուկեան  
Թարեխնամ Առաջնորդ Հայոց  
Ամերիկայի Արեւելեան Թեմին  
Նիւ Եորք.

Գերաշնորհ Սրբազան Հայր,


Համաձայն Ձեր տնօրինութեան, Յունիս Յին չորեքշաբթի, Քանսաս Սթի գացի եւ Նոյն երեկոյեան ժամը Յին աղօթքով բացում կատարեցի Միսական Խորհուրդի ժողովին, Պր. Ջաւէն Հաթութեանի բնակարանին մէջ: Ներկայ էին հետեւեալ ժողովականները.- Արա Ջաքարեան, Ջաւէն Հաթութեան, Ճէնիֆրը Հաթութեան, Նէթալի Հաթութեան, Սթելլա Կիւլեան, Ռոզ Օնպաշեան եւ Մայքըլ Ֆրէնքեան:

Օրակարգի առաջին հարց դրի Ձեր նամակը ուղղուած Ատենապետ Արա Ջաքարեանի, որով պաշտօնապէս ժողովս Առաջնորդին կողմէ վաւերացուելով կը հաստատուէր իր կազմով ու Դիւանով: Նախ շեշտեցի սոյն պաշտօնագրին կարեւորութիւնն ու կշիռը, որով միայն ժողովը պաշտօնական մարմին կը դարձար կարենալ գործելու համար իբր Միսական Խորհուրդ Առաջնորդի հովանաւորութեան ներքեւ: Ապա նկատել տուի թէ բոլոր ժողովականները նախագահին կողմէ նշանակուած էին, ուստի լիազօրուած չէին իրենց կարգին ուրիշ անձ մը նշանակելու կամ ընտրելու, եթէ ժողովականներէն մէկը հրաժարական նեկայացնէ: Այս կէտը նշուեցաւ նկատի ունենալով Տիկին Սթելլա Կիւլեանի պարագան որ թիւրիմացութեամբ հրաժարած նկատուած էր եւ ժողովը առանց ենթակային բերնէն լսելու կամ գրաւոր հրաժարական ստացած ըլլալու, իր բացակայութեան ուրիշ անձ մը ընտրած էր ժողովի կազմին մէջ: Սակայն Տիկին Կիւլեան Յունիս Յին յատենի ժողովոյ յայտարարեց թէ երբեք հրաժարելու նպատակ չէ ունեցած. ուստի այս հարցը պարզուելէ յետոյ ան կը շարունակէ մնալ անդամ Միսական Խորհուրդի:

Յաջորդ հարցն էր ժողովականներէն Ջաւէն Հաթութեանի եւ Արա Ջաքարեանի ինքնագլուխ որոշումը եւ հրաւերը Քահանայի մը այցելութեան, Կիլիկեան Թեմէն, որպէսզի եկեղեցական պաշտամունք կատարէ Յունիս 24ին: Անոնք այս քայլը առած էին ի հեճուկս ժողովականներէն Ռոզ Օնպաշեանի քանիցս յիշեցումին թէ սխալ էր երկու Թեմերու հետ այստեսակ հաղորդակցութիւններ ստեղծել, եւ ընդհանրապէս եկեղեցական մը հրաւիրելու հարցը միայն ժողովի նախագահին իրաւասութիւնն է: Դժբախտաբար այս անձերը ազգային-եկեղեցական կեանքէ հեռու մնալով անծանօթ են կարգ ու կանօնի, առաւել՝ կը յամառին պնդելով թէ՛ ըստ իրենց սխալ չէ անտեսել գոյութիւն ունեցող ցաւալի բաժանումը Ամերիկայի Հայոց.Եկեղւյ.մէջ, մերժելով յետս կոչել Յունիս 24ի իրենց հրաւերը զոր կատարած էին առանց ժողովի նախագահին եւ Թեմական Առաջնորդին գիտակցութեան: Ի զուր դիտել տուի թէ՛ իրենց այս անիրատես տրամաբանութիւնն ու մանաւանդ վերին իշխանութեան դէմ ընթացքը իրօք երկուութիւն եւ պառակտում կրնայ ստեղծել փոքրաթիւ այս գաղութին մէջ:

# Holy Shoghagat

ARMENIAN APOSTOLIC CHURCH



400 HUNTWOOD ROAD + BELLEVILLE, ILLINOIS 62221 + 618-277-6400

VERY REV. SHNORK KASPARIAN

- 2 -

Կը ցաւիմ յայտնելու թէ գիշերուան մինչեւ 11 տեւող  
այս ժողովը դրական լուծումի մը չի հանգեցաւ տրուած ըլլալով  
որ ընդունելութեան բարի տրամադրութիւնը կը պակսէր յատկապէս  
Արա Ջաքարեանի եւ Ջաւէն Հաթուրեանի մօտ, որոնք ընդհակառակը  
կը հրահրէին միջնորդութեամբ, յայտնապէս յամարելով եւ չկամութիւն  
ցոյց տալով: Իրենց առարկութիւնը այն էր որ իրենց բացատրուած  
չէր, որ ուրիշ քահանայ մը հրահրելու ազատ չէին. սակայն երբ  
իրենց ըսուեցաւ որ Իոզ Սնպաշեան նկատել տուած էր այդ հարցը  
եւ պատշաճ էր որ խորհրդակցէին գէթ լուսաբանութիւն ստանալու  
համար նախագահէն, այդ պարագային կը վիճէին թէ՛ ըստ իրենց սխալ  
չէր ըրածնին, ուստի կը մերժէին յետս կոչել Յունիս 24 ի որոշումը,  
անտեսելով Հայց. Եկեղեցւոյ կարգապահական սկզբունքները եւ առ  
հասարակ ժողովական տարրական հասկացողութիւնը, յարգելու համար  
վերին իշխանութիւնը, որուն ենթակայ է այս ժողովը:

Հուսկ, ժողովի փակումէն առաջ երբ առիթ տրուեցաւ  
իւրաքանչիւրին իր կեցուցածն ու որոշումը յայտնելու, երկու  
հոգի, Մայքըլ Պրէնքեան եւ Նէթալի Հաթուրեան, հրաժարական  
տուին, պատճառաբանելով թէ չէին կարող ըմբռնել Հայ Եկեղեցւոյ  
մէջ ծագած բաժանումը ու հետեւաբար կը հրաժարէին մաս կազմելէ:

Տրուած ըլլալով որ երկու հրաժարեալները փոխարինելու  
յարմարութիւնը ներկայացաւ, ուստի պատշաճ նկատեցի առանց յետա-  
ձգութեան նշանակել՝ Պր. Ջարլզ Հանինեան եւ Տիկին Իզապէլ (Իշխան-  
եան) Հանսըն, փոխան վերոյիշեալ երկու հրաժարեալներուն, լրացնելու  
համար Միսական Խորհուրդի կազմը ըստ առաջնոյն:

Չայս հարորդելով Ձերդ Սրբազնութեան առ ի տեղեկատը-  
ւութիւն, կը մաղթեմ յառաջիկային ի վիճակի ըլլալ աւելի դրական  
եւ արդիւնաւէտ համագործակցութեան մը մասին տեղեկագրութիւնը տալ:

Մտաչելով ի համբոյր Ձեր Ս. Աջին, մնամ խորին յարգանք:

Ձերդ,

Մնորհք Մ. Վրդ. Գասպարեան  
Հոգեւոր Հովիւ